ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 99-49-28
hovtashen.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15.12.2016 թվականի թիվ 14-Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշեն համայնքում 2017 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

*1.*Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանել.

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500/յոթ հազար հինգ հարյուր/ դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ:

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000/քսանհինգ հազար/ դրամ:

բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000/ քսանհինգ հազար/ դրամ:

բդ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 հիսուն հազար/դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/դրամ:

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

*2.*Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում՝շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500/երկու հազար հինգ հարյուր/դրամ:

1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկված է 0.5 գործակցի կիրառմամբ:

4. **Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝**

«1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլատվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ,

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20500 դրամ,
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25500 դրամ,
զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45500 դրամ»:
«2)Ծխախոտի վաճառքի թույլատվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,
գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ,
դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20500 դրամ,
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25500 դրամ,
զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45500 դրամ»:
5. Համայնքի տարածքում՝
ա/Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:
բ/Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200000 դրամ.
գ.խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թուլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000դրամ.
«զա.համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլատվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2500 դրամ,
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5500 դրամ,
գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10500 դրամ,
դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես հանրային սննդի օբյեկտի համար 15500 դրամ,
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 20500 դրամ,

գ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 30500 դրամ»:
ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ,
բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 դրամ,
գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4000 դրամ,
դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես հանրային սննդի օբյեկտի համար 8000 դրամ,
ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000 դրամ,
զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25000 դրամ»:
5.1.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքներ (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլատվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա.առևտրի օբյեկտների համար 50000 /հիսուն հազար/ դրամ:
բ. հանրային սննդի և զվարճանքների օբյեկտների համար՝ 50000/հիսուն հազար/ դրամ:
գ.բաղնիքների (սաունաների) համար 200000/երկու հարյուր հազար/ դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1000դրամ:
բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ:
գ.այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ
դ.սոցիալական գովազդի համար՝0 դրամ,
ե.համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով՝125դրամ:
զ.արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝50 դրամ:

8.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000դրամ:

9. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

10.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:

Տեղական վճարներ

*1.*Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխվող վերակառուցման և ավարտված շինարարություն փաստագրելու համար, մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման համար վճար սահմանել 5000դրամ:

*2.*Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 1000/հազար/ դրամ:

*3.*Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 1000/հազար/դրամ:

*4.*Համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանվում է՝

կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքի անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 0(զրո)դրամ:

Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ընթացիկ տարում փոփոխության ենթակա չեն:

Քվեարկության

	Կողմ	դեմ	ձեռնպահ
Ա.Ս.Ալեքսանյան			
Ա.Հ. Հարությունյան			
Գ. Դ. Ներսիսյան			
Ռ. Օ. Մկրտչյան			

Համայնքի ղեկավար՝ Ա. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Հովտաշեն Շիրազի 10/2
Փ.0725
/093/ 99-49-28
hovtashen.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15.12.2016 թվականի թիվ 15-Ն

2016 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

2016 թվականի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ ծրագրի (11-01-02-51) գործառնական դասակարգման 4891 հոդվածից պակասեցնել 47000 (քառասունյոթ հազար) դրամ և նախատեսել 1.254.964 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար ինը հարյուր վաթսունչորս) դրամ:

1.Ավելացնել Նախադպրոցական ուսուցում ծրագրի (09-01-01-51) գործառնական դասակարգման 4239 հոդվածին 12000 (տասներկու հազար) դրամ:

2.Ավելացնել կառավարման մարմնի պահպանում ծրագրի (01-01-01-51) գործառնական դասակարգման 4261 հոդվածին 35000 (երեսունհինգ հազար) դրամ:

Քվեարկության

	Կողմ	դեմ	ձեռնպահ
Ա.Ս.Ալեքսանյան			
Ա.Հ. Հարությունյան			
Գ. Դ. Ներսիսյան			
Ռ. Օ. Մկրտչյան			

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մկրտչյան